Ցերեսն սոյն Թղթոյ
Նորին բարձր գերազանցութիւն մեծ կայսերութեան Ֆրանցայու քաջ խորհրդական և մինիստր հաւատոյ և օրինաց Փորտալիս մեծ իշխան ողորմած Ցեսուն մերում
Ի Թագաւորական քաղաքն Փարիզ

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՆԱՊՕԼԵՈՆ ՄԵԾԻՆ

Առ մեծն Նապոլէոն ի Դանիէլ կաթողիկոսէ ամենայն հայոց

Մեծ Նապոլէոն խաչապսակ ինքնակալ օգոստոս կայսր Ֆրանցայու տիրող քարեպաշտութեան

Ամենաողորմած թագաւոր և պաշտպան եկեղեցւոյ հաւատացելոց

Աղօթարար ցանկալի կենացդ և

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Արարատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի, իմանալուսն զօրութեամբ ներկայացեալ առաջի Բարձրագոյն Աթոռոյ Սուրբ Թագաւորութեան Ձերոյ խոնարհ երկրպագութեամբ զհոգևորական օրհնութիւնս հանդերձ Քրիստոսական ողջունիւ Ձեզ մատուցանեմք։

Յաւիտենից ժամանակաց կայսերք Հռովմայեցւոց մեծագոյն գթասիրութեամբ բարերար և ողորմած են եղեալ միշտ Թագաւորաց և Քահանայապետաց Հայոց և ողջոյն ազգի նոցա և մինչև ցայսօր ժամանակի անմոռաց ունի եկեղեցին Հայաստանեայց. և պարծի նովաւ միշտ, բայց ի բազմանալ անտանելի նեղութեանց և աշխարհակործան մեծամեծ խռովութեանց յԱսիոյ և մանաւանդ աշխարհս Հայոց օր ըստ օրէ զրկեալ յամենայն բարեբաղդութեանց, ահա՛ ծաւոր ամք են, զի վասն ժամանելոյ ի յետին նուաստութիւն իբրև ի մո-

ռացօնս եմք յամենալուսափայլ մտաց հասարակախնամ կայսերաց Հռովմայեցւոց։

Ուրախ եմք և առաւելապէս գոհանամք զԱստուծոյ և զանպատում շնորհաց ողորմութեան նորա, զի բարերար ակնարկութեամբ՝ նորա առ մեզ եկն ի սմին ժամանակի ի Քրիստոսաէջ Աթոռս Արարատեան խոհեմութեամբ և իմաստութեամբ հռչակեալ դեսպան Ձերոյ մեծահրաման Կայսերութեանդ առ բարեբարոյ և ողորմածագոյն բարձր աստիճան Տահն հզօրաց Պարսից և առ յատուկ պաշտպանն Սրբոյ Աթոռոյս մերում Աբբաս Միրզայ որդի նորա ողորմութեամբ և մարդասիրութեամբ և իմաստութեամբ գերապատուեալ բարձր բարեծնունդ Արեգական նշանակիր ծօմբատիտ Բուասսо, զոր կարեմք հանգուստիպ ընդունել նշան մեծագոյն ողորմութեան Աստուծոյ, որ երբեմն Հայրն աշխարհի զաղաւնին՝ յորժամ ի տապան անդր տարածեալ ծփիւր յերեսս աշխարհահեղձոյց ջուրց։

Լաւ ևս կարէ պատմել լիշեալ դեսպանն Ամենաողորմած Աստուածատիպ սուրբ կայսերութեան։ Այլ մեք վստահացեալ յԱստուածագութ յողորմութիւնս Ձեր և ի բարերար ակնարկութիւնս նախնի Աթոռակալաց Ձերոց աստէն ի ծագս տիեզերաց ի ծունկս անկեալ առաջի ամենողորմած Աթոռոյ Ձերոյ բարձրագոյն Կայսերութեան, որպէս աթոռակալի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յանձն առնեմք շնորհաց աշխարհատարած ողորմութեան և մարդասիրութեան Ձերոյ և զԱթոռս Արարատեան և զամենայն զհոգևորականս և զմարմնաւորականս Հայոց և ամենախոնարհաբար խնդրեմք, զի ուր տարածեսցի ողորմութիւն Աթոռոյ Ձերոյ Կայսերական մեծութեան եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց։

Ողջ լեր Ամենաողորմած սուրբ Օգոստոս Կայսր և

մեք յուսով մեծաւ մնամք ողջոյն ազգաւ ազգին կենաց Ձերոց և վասն բոլոր պալատի Ձերում օգուստոս ինքնակալ Ձերոց Բարձրագոյն Կայսերութեան

Խոնարհ ծառայ և Աղօթարար կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարք Արարատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Դանիէլ։

Օրինակ հասցէի սոյն մուսավատիս

Նորին կայսերական մեծութեան ինքնակալին Ֆրանցայու եւ դբալի Իդալեոյ օգուստափառ Մեծ Նապոլիոն ամենաողորմած թագաւորի մերում

Ամենափառաւոր պալատն իւրոյ կայսերական բարձրութեան։

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄ. ՖՐԱՆՑ Գ. ԿԱՅՍԵՐ

Ա.

Առ կայսրն Գերմանացւոց խնդիր վասն հրովարտակի, զի բաց յայնցանէ, որք ունիցին զգիր ի պատրիարգէն Արարատեան, այլ ոք ի կարգաւորաց, մի՛ կարող լիցի մտանել ի մէջ Հայոց եղելոց ի սահմանս տէրութեան իւրոյ։

Ամենալուսափայլ տիրող ինքնակալ հզօր կայսր Հոսմայ եւ Գերմանիոյ Ֆրանց երրորդ։

Ամենողորմած թագաւոր և պաշտպան հաւատացելոց

Աղօթարար անգին կենացդ և

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ Կաթուղիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Արարատեան Աթոռոյ Սուրբ Էջմիածնի ամենախոնարհ երկրպագութեամբ զլիաբերան օրհնութիւնս հանդերձ Յիսուսանդ ողջունիւ Ձեզ մատուցանեմք։

Սէր և խնամակալութիւն Կայսերաց Հռոմէացւոց առ Թագաւորս և առ Քահանայապետս և առ ամենայն